ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Երկուշաբթի, 23 օգոստոսի 2021թ.

«Հետք» թերթի լրագրող
Արմեն Միրզոյանին

Հարգելի պարոն Միրզոյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

- Սահմանապահ ուղեկալներին վերաբերող 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ հարցերը կարգավորվում են ՀՀ և ՌԴ սահմանապահ ծառայությունների միջև իրականացվող համագործակցության շրջանակում,

- 3-րդ հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ զինված ուժերը շարունակում են սահմանված կարգով իրականացնել մարտական հերթապահությունը հայ-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով,

- 4-րդ հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ տարածքների փոխանակման հարցով Հայաստանի Հանրապետությունը որևէ երկրի հետ բանակցություններ չի վարում,

- 5-րդ հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ռուս սահմանապահների տեղակայման գործընթացն իրականացվում է հայ-ռուսական համագործակցության շրջանակում, մասնավորապես երկու երկրների միջև 1991թ. ի վեր համագործակցության տարբեր ուղղություններով ստորագրված և գործող իրավապայմանագրային լայն բազայի հիման վրա:

Կատարող՝ Արտաքին գործերի նախարարություն
Պաշտպանության նախարարություն

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի
վարչության պետ
Արմեն Խաչատրյան

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայք էջ՝ www.gov.am